

ԲԱԺԻՆ 5. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ
РАЗДЕЛ 5: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ
SECTION 5: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY

37.035.6 : 39

<https://0000-0002-7172-6007>

DOI:10.46991/educ-21st-century.v5.i1.183

**COMPONENTS OF FOLK PEDAGOGY AS A FACTOR OF PRESERVING NATIONAL
IDENTITY - AND AN ETHNOCARRIER OF ETHNIC SOCIALIZATION**

Armenuhi Ashikyan

*Candidate of Pedagogical Sciences,
associate professor.*

*Yerevan State University, Armenia
armine_ashikian@yahoo.com*

Summary

The millennial experience of folk pedagogy has identified a number of effective means influencing the formation of personality, which are most concentrated in folk folklore: myths, legends, epics, fairy tales, folk miniatures (fable, proverb, saying, riddle, etc.), songs, family life, traditions. The latter are components that have educational potential, which directly contribute to the formation of national consciousness of the ethnocarrier, historical and cultural system of values.

Nowadays, the study of national pedagogical culture has become more relevant and important. In folk pedagogy there are no strictly formed rules of education, systematized knowledge, specific scientific concepts. The creator of folk pedagogy is the people who, without books and special essays, have always sought and found effective means and found effective ways to prepare a new generation for life and work. Nowadays, the study of national pedagogical culture has become more relevant and important. In folk pedagogy there are no strictly formalized rules of education, systematic knowledge, specific scientific concepts. The formation of a modern ethnocarrier is an important motive of folk education in folk pedagogy. This problem is especially important nowadays, because there is a danger from powerful superpowers to turn the Armenian society with its long and peculiar historical past into a community of only historical value (folklore). From this point of view, in order to resist such approaches, to preserve their special place in the preservation of national identity, the components of folk pedagogy play their special place and role as a factor of ethnic socialization and the formation of the personality of the Armenian people.

Within the framework of this article, we have identified fairy tales, proverbs, sayings, riddles and folk songs from folk folklore that influence the formation and socialization of personality. The latter are of particular importance in folk pedagogy, exerting their influence on the education, upbringing and development of generations.

Keywords: folk pedagogy, national identity, national consciousness, national image, ethnic socialization, formation of personality, components of folk pedagogy, ethnic education and upbringing, formation of a national system of values.

**КОМПОНЕНТЫ НАРОДНОЙ ПЕДАГОГИКИ КАК ФАКТОР СОХРАНЕНИЯ
НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ И ЭТНИЧЕСКОЙ СОЦИАЛИЗАЦИИ
ЭТНОНОСИТЕЛЯ**

Ашикян Арменуи

Кандидат педагогических наук, доцент.

*Ереванский государственный университет, Армения
armine_ashikian@yahoo.com*

Аннотация

Тысячелетний опыт народной педагогики выделил ряд эффективных средств, влияющих на формирование личности, которые в наибольшей степени сконцентрированы в народном фольклоре: в мифах, легендах, эпосе, сказках, народных миниатюрах (басня, пословица, поговорка, загадка и т.д.),

песнях, семейном быте, традициях. Последние являются компонентами, имеющими воспитательный потенциал, которые непосредственно способствуют формированию национального сознания этноносителя историко-культурной системы ценностей.

В наши дни изучение национальной педагогической культуры стало еще более актуальным и важным. В народной педагогике отсутствуют строго сформированные правила воспитания, систематизированные знания, конкретные научные понятия. Создатель народной педагогики – народ, который без книг и специального сочинения всегда искал и находил эффективные способы подготовить новое поколение к жизни и работе. Формирование современного этноносителя – важный мотив народного воспитания в народной педагогике. Эта проблема особенно важна в наши дни, поскольку есть опасность со стороны мощных сверхдержав превратить армянское общество со своим долголетним и своеобразным историческим прошлым в представляющее только историческую ценность (фольклорное) сообщество. С этой точки зрения, чтобы противостоять таким подходам, сохранить национальную идентичность свое особое место занимают и важную роль играют составляющие народной педагогики как фактор этнической социализации и формирования личности армянского народа.

В рамках данной статьи мы выделили сказки, пословицы, поговорки, загадки и народные песни из народного фольклора, влияющие на формирование и социализацию личности. Последние имеют особое значение в народной педагогике, оказывая свое влияние на образование, воспитание и развитие поколений.

Ключевые слова: народная педагогика, национальная идентичность, национальное сознание, национальный облик, этническая социализация, формирование личности, компоненты народной педагогики, этническое образование и воспитание, формирование национальной системы ценностей.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐՍԱՐԴԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԷԹՆՈԿՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Աշիկյան Արմենուհի

մանկ. գիտ. թեկն., դոցենտ

Երևանի պետական համալսարան, Հայաստան

armine_ashikian@yahoo.com

Ներածություն: Ժողովրդական մանկավարժության հազարամյա փորձը առանձնացրել է անձի սոցիալականացման վրա ազդող արդյունավետ մի շարք միջոցներ, որոնք առավելապես խտացված են ժողովրդական բանահյուսության մեջ՝ առասպելներում, վիպերգերում, էպոսում, հեքիաթներում, ժողովրդական մանրապատում ստեղծագործություններում (առակ, առած-ասացվածք, հանելուկ և այլն), երգերում, ընտանեկան կենցաղում, ավանդույթներում: Վերջիններս դաստիարակչական ներուժ ունեցող բաղադրատարրեր են, որոնք ուղղակիորեն նպաստում են էթնոկրի ազգային գիտակցության, պատմամշակութային արժեհամակարգի ձևավորմանը: Լեզու, ազգային գիտակցություն և մշակույթ. միայն վերջիններս են որոշում մարդու պատկանելիությունն այս կամ այն ազգին:

Բանալի բառեր: Ժողովրդական մանկավարժություն, ազգային ինքնություն, ազգային գիտակցություն, ազգային դիմագիծ, էթնիկական սոցիալականացում, անձի ձևավորում, ժողովրդական մանկավարժության բաղադրատարրեր, էթնիկական կրթության ու դաստիարակություն, ազգային արժեհամակարգի ձևավորում:

Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ու վերլուծության ենթարկել ժողովրդական բաղադրատարրերի դերը էթնոկրի ազգային ինքնության պահպանման ու էթնիկական սոցիալականացման գործում:

Գիտական նորայթը ժողովրդական մանկավարժության բաղադրատարրերի նորովի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է 21-րդ դարի հայ էթնոկրի էթնիկական սոցիալականացման գործում:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հիմնախնդրին անդրադարձել են տարբեր գիտնականներ՝ յուրաքանչյուրն իր հետազոտություններում ներկայացնելով ժողովրդական բաղադրատարրերի դերի, առանձնահատկությունների վերաբերյալ ուրույն մոտեցումներ տվյալ ժամանակաշրջանի էթնոկրի էթնիկական սոցիալականացման գործում (Ղանալանյան Ա., Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Հ. Թումանյան, Ղ. Աղայան, Хухлаев О., Батурина Г. И., Волков Г. Н. և այլք):

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է հայ էթնոկրի էթնիկական սոցիալականացման և ազգային ինքնության պահպանման գործում ժողովրդական մանկավարժության բաղադրատարրերի տեսական վերլուծությամբ ու հիմնավորմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հիմնախնդրի վերլուծությունը կարող է օգտակար լինել էթնոմանկավարժներին, մանկավարժ-դաստիարակներին, ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Հիմնական նյութի շարադրանքը: Մեր օրերում ազգային մանկավարժական մշակույթի ուսումնասիրությունը դարձել է առավել այժմեական ու կարևոր: Ժողովրդական մանկավարժության մեջ գոյություն չունեն դաստիարակության խիստ ձևավորված կանոններ, համակարգված գիտելիքներ, գիտական կոնկրետ հասկացություններ: Ժողովրդական մանկավարժության ստեղծողը ժողովուրդն է, որն առանց գրքերի ու հատուկ շարադրանքի միշտ փնտրել ու գտել է արդյունավետ միջոցներ՝ նոր սերնդին կյանքին ու աշխատանքին նախապատրաստելու համար:

Ժամանակակից էթնոկրի ձևավորումը ժողովրդական մանկավարժության մեջ ժողովրդական դաստիարակության կարևոր շարժառիթն է: Այս հիմնախնդիրն առավել կարևորվում է հատկապես մեր օրերում, քանզի կա վտանգ գերտերությունների կողմից՝ հայությանը, իր երկարամյա ու յուրահատուկ պատմական անցյալով հանդերձ, միայն պատմական արժեք ներկայացնող հանրույթի վերածելու: Այս տեսանկյունից նման մոտեցումներին դիմակայելու, ազգային ինքնությունը պահպանելու գործում իրենց ուրույն տեղն ու դերակատարությունն ունեն ժողովրդական մանկավարժության բաղադրատարրերը՝ որպես հայ ժողովրդի էթնիկական սոցիալականացման ու անձի ձևավորման գործոններ: Ժողովրդական ստեղծագործությունները մանկավարժության մեջ ուրույն նշանակություն ունեն՝ իրենց ազդեցությունն ունենալով սերունդների կրթության, դաստիարակության ու զարգացման գործում: Ժողովրդական մանկավարժության հազարամյա փորձը առանձնացրել է անձի ձևավորման ու սոցիալականացման վրա ազդող մի շարք արդյունավետ միջոցներ, որոնցից առանձնացրել ենք հեքիաթները, առակները, առած-ասացվածքները, հանելուկներն ու ժողովրդական երգերը:

Հեքիաթների հեղինակը հիմնականում ժողովուրդն է: Ժողովրդի սիրտը, միտքը, փիլիսոփայությունն արտացոլվում է նրա ստեղծած հեքիաթներում: Աստվածաշնչյան առասպելներից սկսած մինչև մեր օրերը առասպելը, առակ-ասացվածքները, հեքիաթները կենդանի են ժողովրդի մեջ: Վերջիններս հնարավորություն են տալիս երեխային

լուծելու «կյանքի տարաբնույթ դժվարությունները»՝ ըստ իրենց տարիքային ու անհատական առանձնահատկությունների [13, 14]:

Մեծ է ժողովրդական հեքիաթների՝ որպես մանկավարժական արժեքների դերը սերունդների անձի ձևավորման ու սոցիալականացման գործում: Հեքիաթները նպաստում են երեխայի համակողմանի զարգացմանը, ձևավորում նոր սերնդի արժեհամակարգը, հոգեկերտվածքը՝ նրանց ներգրավելով ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային սոցիալ-մշակութային հարաբերությունների ոլորտ [12]: «Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք արտացոլվում են հերոսների արարքներում, խոսքերում: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնող ազդեցությունը [2, 173]: Հայկական ժողովրդական հեքիաթները, արտացոլելով ժողովրդի կյանքը, մտքերը, երազանքներն ու մտահոգությունները, ազգային-միավորող նշանակություն ունեն՝ արտահայտելով նաև մեր ժողովրդի տարբեր հատվածների հույզերը, սիրտն ու միտքը, հարստացնելով մեր կյանքը, մշակույթը, հոգեկան աշխարհը: «Հեքիաթը՝ գերագույն արարքն է,– գրել է Հովհաննես Թումանյանը,– անգամ հանճարն անկարող է հեքիաթ ստեղծել, թեպետ միշտ ձգտել է դրան» [3, 472]:

Ինչպես դարեր շարունակ հայ ազգը սովել, լիցք է ստացել ժողովրդական հեքիաթներից, ներկայումս էլ դրանք չեն կորցրել իրենց կենսական, այժմեական նշանակությունն ու ազդեցությունը: Այսօր էլ թումանյանական ու աղայանական հեքիաթները դաստիարակող, ուսուցանող հզոր գործիք են հայ էթնոկրի անձի ձևավորման ու էթնիկական սոցիալականացման գործում (Հ. Թումանյանի «Անհաղթ աքլորը», «Պոչատ աղվեսը», «Չախչախ թագավորը», «Տերն ու ծառան», «Ոսկու կարասը» և այլն, Ղ. Աղայանի «Անահիտը», «Անտառի մանուկը», «Եղեգնուհին», «Վաճառականի խիղճը», «Արեգնագան» և այլն [1]:

Հեքիաթները զարգացնում են նաև երեխայի երևակայությունը, սովորեցնում մտածել, ստեղծագործել: Հեքիաթներում առկա չարի ու բարու պայքարն ավարտվում է բարու հաղթանակով, ինչն էլ օգնում է մասնագետ-մանկավարժին դաստիարակչական գործունեություն ծավալելիս երեխայի մեջ ձևավորել մարդասիրական որակներ: Լեզուն, լինելով մատչելի, երեխաների համար հնարավորություն է ստեղծվում դերային խաղերի ժամանակ կրկնօրինակելու դրական հերոսներին և արդյունավետ շփվելու: Դրական հերոսներին նմանվելու միտումը մեծ դեր ունի երեխայի հետագա կյանքում՝ դրական ազդեցություն թողնելով նրա հուզական ներաշխարհի, սեփական ուժերի նկատմամբ հավատի, վարքի ձևավորման վրա:

Հեքիաթների հետ աշխատանքն ունի տարբեր դրսևորումներ՝

- ❖ հեքիաթի ընթերցում,
- ❖ կարդացածի վերապատմում,
- ❖ հեքիաթի հերոսների վարքագծի քննարկում,
- ❖ հեքիաթ-նկարների ցուցադրում-ցուցահանդես և այլն [9, 41-45]:

Հեքիաթին բնորոշ լավատեսությունն ու բարու հաղթանակի հավերժական հավատն արտացոլում են ժողովրդի՝ դարերի ընթացքում ձևավորված արժեհամակարգը [4, 53]:

Հայ ժողովրդական հեքիաթներն այսօր էլ չեն կորցրել իրենց պատմաճանաչողական, դաստիարակչական նշանակությունը: Նրանք իրենց հարուստ բովանդակությամբ ուսումնասիրության լայն ասպարեզ են բացում գիտության գրեթե բոլոր բնագավառների մասնագետների համար: Նրանք առատ ու անսպառ նյութ են մատակարարում դաստիարակ-մանկավարժին, էթնոմանկավարժին, հոգեբանին, աշխարհա-

գրագետին, պատմաբանին և մյուսներին՝ երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործն իրականացնելիս:

Առակները բանահյուսության հնագույն ժանրերից են, որոնց մի մասում այլաբանորեն կենդանիների, բույսերի կերպարների միջոցով արտացոլում են մարդկանց արատներն ու թերությունները, ժողովրդի մտածելակերպն ու կենսափիլիսոփայությունը: Հայկական ժողովրդական առակները էթնոմանկավարժական ներգործուն միջոցներ են, որոնց միջոցով հայ ժողովուրդը կարողացել է դիպուկ ու պատկերավոր արտահայտել բարոյախրատական, դաստիարակչական գաղափարներ, մտքեր: Վերջիններս անառարկելի միջոցներ են եղել ժողովրդի կյանքում սերունդների կրթության, դաստիարակության և ազգայինը սերմանելու գործում:

Որոշ առակներում դրվատվում են առաքինությունը, բարոյականությունն ու ազնվությունը, մարդկայինն ու հայրենասիրությունը, դատապարտվում չարն ու անմարդկայինը, հիմարությունն ու սգիտությունը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այսօր էլ հայ մեծանուն առակագիր Մխիթար Գոշի («Արջն ու մրջյունը», «Ձկներն ու նրանց թագավորը», «Ջալլամն ու ծիտը», «Մուկն ու ուղտը» և այլն) և Վարդան Այգեկցու («Առյուծը, աղվեսն ու արջը», «Այրի կինն ու խորթ որդին», «Առյուծը և մարդը» և այլն) առակները [8] սիրված գրական արժեքներ են, որոնք ունեն ոչ միայն դաստիարակչական, այլև ուսուցողական նշանակություն: Ինչպես հեքիաթներում, առակներում ևս այլաբանորեն հաղթում են բարին, աշխատավորը, ազնվությունը, բարոյականը, մերժվում՝ չարն ու հետադիմականը, հափշտակիչն ու գիշատիչը: Ըստ էության, լավատեսությունն ու հավատը հայ ժողովրդին բնորոշ հատկանիշներից են, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, իրենց արտացոլումն է գտել առակներում՝ չկորցնելով արդիականությունը նաև մեր օրերում:

Ժողովրդական առակները ևս էթնիկական սցիալականացման կարևորագույն միջոցներից են, որոնք բոլոր ժամանակներում ունեն իրենց ուրույն դերն ու նշանակությունը էթնոկրի ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հանելուկը բառերի որոշակի կապակցություն է, որի մեջ այլաբանորեն թաքնված է որևէ իմաստ, որը ենթակա է վերհանման կամ գուշակման: Հայ ժողովրդական հանելուկների մեծ մասը բանաստեղծական փոքրիկ այլաբանական ստեղծագործություն է, որը արտահայտվում է հարցական տարբեր բանաձևերով՝ «Էն ի՞նչն է, ի՞նչը», «Էն ի՞նչն է» և այլն: Վերջինս հանելուկ ասողի կողմից առաջադրվում է ունկնդրին՝ գուշակելու դրանց իմաստը: Կռահման այս հանգամանքի շնորհիվ էլ հանելուկները կապվում են մտավարժության հետ և դառնում մարդկային մտավոր ունակությունները, սրամտությունը փորձելու ու աշխարհը ճանաչելու լավագույն միջոցներ: Ինչպես իրավացիորեն նշում է Գ. Ն. Վոլկովը, «շատ գեղեցիկ է հանելուկի բանաստեղծական ձևը, խորն է կռահման մեջ տրված միտքը...» [10, 186]:

Ժողովրդական մանկավարժության մեջ հանելուկներն իրականացնում են մի շարք գործառույթներ՝

- ✓ **իմացական** – հանելուկի լուծումը նպաստում է երեխայի մտավոր զարգացմանը, վերջինս սովորում է մտածել, վերլուծել, համադրել,
- ✓ **գիտելիքի փոխացում** – հանելուկի միջոցով փոխանցվում է մեկմեկու գիտելիք,
- ✓ **գեղագիտական** – հանելուկը երեխայի մեջ ձևավորում է գեղեցիկն ընկալելու ունակություն, զարգացնում ճաշակ,

✓ **բարոյախրատական** – բարոյական որակների ձևավորման լավագույն միջոց են ինչպես հեքիաթները, այնպես էլ հանելուկները, որոնք հնարավորություն են ընձեռում երեխային մտածելու բարու ու չարի, լավի ու վատի մասին:

Հանելուկները վաղ անցյալում ունեցել են գործնական կիրառություններ և հնուց կենցաղավարել են իբրև մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ [5, 253-254]:

Հայ ավանդապատումները [6] վկայում են, որ ինչպես տարբեր ժողովուրդների, մեր ժողովրդական կենցաղում ևս հարատևել է այն սովորույթը, ըստ որի՝ ամուսնությունից առաջ հարսնացուն ու փեսացուն հանելուկներով փորձում էին միմյանց մտավոր ունակությունները, և փեսացուն իրավունք էր ստանում հարսնացուի կողքին նստելու նրա առաջարկած հանելուկները լուծելուց հետո միայն [6, 254]:

Հնում հանելուկները ծառայել են նաև որպես երկու անձանց միջև մղվող մրցախաղ, յուրօրինակ մենամարտ, որը հետագայում իր ուրույն դրսևորումն է գտել նաև ժողովրդական երգիչների կենցաղում: Այսօր արդեն, քաղաքակրթության հետագա զարգացմանը զուգահեռ, հանելուկները կորցրել են իրենց երբեմնի նշանակությունը՝ վերածվելով ժողովրդական զվարճալի ժամանցի միջոցների: Ավելին, մեր օրերում ամբողջովին փոխանցվել է մանկաշխարհին և դարձել ժողովրդական մանկավարժության ու մանկական բանահյուսության ամենասիրված տեսակներից մեկը:

Հանելուկների էթնոմանկավարժական նշանակությունը հիմնավորվում է նաև նրանով, որ նրանցում առկա գիտելիքները խորապես էթնիկական են՝ խտացնելով իրենց մեջ նաև համամարդկային արժեքներ [4, 53]: Հիրավի, հանելուկները ոչ միայն իմացական գիտելիքների փոխանցման, բարոյախրատական գործառնություններ են իրականացնում, այլև նպաստում են ժամանակակից էթնոկրի ընկալման, հիշողության, երևակայության, ուշադրության, վերացական մտածողության ու խոսքի զարգացմանը:

Ի՞նչն ենք հանձնում մեկս մեկի,

Ավանդաբար՝ որդուց որդի,

Ծնողից էլ թանկ, հարազատ,

Ուր ապրում ենք անհոգ, ազատ:

Հայրենիք

Կամ՝

Էն ի՞նչնա, ի՞նչը՝

Տունա, ապրող մարդ չկա,

Իսկ դոնախ էկողը տարով նստումա:

Գրապահարան

Այսպիսով, հանելուկները՝ իբրև էթնոմանկավարժական կարևոր միջոցներ, էթնոկրի համար բացահայտում են իրականության բազմաթիվ կողմերը՝ նպաստելով ճանաչողական գործընթացի զարգացմանը:

Առած-ասացվածքները հայ ժողովրդի ազգային դիմագիծը ներկայացնող «մարգարիտներ են», որոնք ուղղակի կամ փոխաբերական իմաստ ունեցող կարճ, պատկերավոր ասույթներ ու դատողություններ են և արտացոլում են ժողովրդի մտածելակերպը, առողջ հումորն ու կենսասիրությունը: «Առածներն ու երգերը,– գրում է Մ. Գորկին,– միշտ հակիրճ են, մինչդեռ նրանց մեջ գրքերով մեկ խելք ու զգացմունք է դրված» [11, 124]:

Առածների և ասացվածքների հետ են կապվում դիպուկ արտահայտությունները, զվարճալի սրախոսությունները, շուտասելուկներն ու հանելուկները: Առածներն ու ասացվածքները՝ իբրև ժողովրդական ստեղծագործություններ, դարեր շարունակ արտացոլել են ժողովրդի կյանքը պատմական զարգացման ողջ ընթացքում: Ներկայումս էլ ժողովրդական առածներն ու ասացվածքները ժողովրդական մանկավարժության մեջ

չեն կորցրել իրենց ճանաչողական, դաստիարակչական ու գեղարվեստական նշանակությունը նոր սերնդի դաստիարակության գործում՝ քննադատելով մարդկային արատներն ու բացասական երևույթները («Խանին թամահը շատ ա, աշխարհն էլ տաս, կշտանալ չի», «Իմաստունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի», «Ծուլլի համար շաբաթվա յոթ օրն էլ կիրակի է», «Մի թել քաշես, հազար կարկատան կը թափվի...» և այլն), գովաբանելով ժողովրդի հզոր կամքն ու ուժը, փորձություններին դիմակայելու միասնությունն ու պոռթկումը («Գեղ կանգնի, գերան կը կոտրի», Մեջք մեջքի տանք, սար շուռ կտանք», «Ժողովուրդը քնած առյուծ է, որ զարթնավ, էլ չի քնի» և այլն):

Ժողովրդական առած-ասացվածքներն աչքի են ընկնում իրենց բանաստեղծական լեզվի ու մշակույթի բարձր արժանիքներով: Քիչ խոսքով շատ բան ասելու, ներագդելու բացառիկ ուժը, պարզությունը, բնութագրումների դիպուկությունը նրանց բնորոշ առանձնահատկություններն են («Ծառն ինչքան բերք տա, գլուխն այնքան խոնարհ կպահի», «Զուրն իր ճամփան կբացի», «Ադամանդը ցեխի մեջ էլ կփայլի» և այլն): Ուստի առակներում ներառվում են ժողովրդի հավաքական գնահատականը, ժողովրդական մտածողությունը: Այն ժողովրդի կենդանի ձայնն է բոլոր ժամանակներում՝ իր ուրույն դրսևորումներով, մոտեցումներով ու գնահատականներով:

Ժողովրդական քնարերգությունը՝ ժողովրդական երգերը, դարերի խորքից մեզ հասած այն գոհարներն են, որոնք թեն պատմական զարգացման տարբեր փուլերում ետ են մղվել, անգամ անհասկանալի չափով աղավաղվել, սակայն իսպառ չեն վերացել: Այդ է պատճառը, որ այսօր էլ մասնագետ-հետազոտողները նրանց մեջ կարողանում են ցույց տալ ժողովրդի հնագույն պատկերացումները, ճաշակը, խոհերն ու կենսագործունեությունը: Հայկական ժողովրդական երգերում գովերգվում են հայ աշխատավորը, գեղեցիկն ու սերը, հայրենիքն ու հայրենասիրությունը, ազնվությունն ու հավատարմությունը:

Հայկական ժողովրդական երգերը հայ ժողովրդի ազգային դիմագիծը, խառնվածքն արտահայտող երաժշտական ստեղծագործություններ են, ուր կարևորվում են մի քանի գործառնություններ՝

- ❖ ճանաչողական,
- ❖ դաստիարակչական,
- ❖ հաղորդակցական,
- ❖ գեղագիտական,
- ❖ կիրառական:

Երգերի միջոցով գովերգվում են աշխատանքը, սերն ու արդարությունը, որոնք հույս են, սպասում, երազանք, երջանկություն, մյուս կողմից՝ պարսավում դավաճանությունը, կողոպուտը, կեղծիքը, որոնք դիտարկվում են որպես ազգային դիմագիծն ու արժանապատվությունը վտանգող որակներ («Հով արե՛ք, սարե՛ր», «Թագվորի մեր դո՛ւս արի», «Խնձորի ծառի տակին», «Քելե՛, լաո՛», «Սարերի հովին մեռնիմ» և այլն) [7, 215]:

Հայ քնարերգության շարքում մեծ տեղ ունեն մանկական խաղերգերը, որոնց ուսուցումը սկսվում է ընտանիքում և առավել հետևողականորեն շարունակվում նախադպրոցական կրթադաստիարակչական հաստատություններում, դպրոցում («Ծիտիկ, «Արև, «Հավիկ, «Ծափի՛կ-ծափի՛կ», «Ա՛յ իմ գնդակ, ջա՛ն գնդակ» և այլն): Մանկական խաղերգերում արտացոլված են կենցաղն ու աշխատանքային առօրյան իրականության մանկական ընկալմամբ: Սրանք զարգացնում են երեխայի հիշողությունը, երևակայությունը, կամային որակները, խոսքը:

Հայկական ժողովրդական երգարվեստում իր մեծագույն ավանդն ու դերակատարությունն ունի Կոմիտասը, որը հայ երաժիշտներից առաջինն էր, որը հայտնաբերեց ազգային արվեստի ինքնատիպության ակունքներն ու օրինաչափությունները: Պահպանելով սկզբնաղբյուրի առանձնահատկությունները՝ նա մշակեց նոր ուղիներ ու ձևեր ժողովրդական երգի մատուցման հայրենանվեր ու պատասխանատու գործում:

Ներկայումս էլ էթնոմանկավարժության մեջ կարևորվում են հայկական ժողովրդական երգերի ուսուցումը, դերն ու ազդեցությունը սերունդների էթնոմշակութային զարգացման ու ձևավորման գործում՝ գուգակցելով ավանդականն ու ժամանակակիցը:

Եզրակացություն: Այսպիսով, անգնահատելի են ժողովրդական մանկավարժության միջոցների դերն ու ազդեցությունը սերունդների էթնիկական կրթության ու դաստիարակության գործում: Ժողովրդական դաստիարակության բաղադրատարրերի միջոցով պահպանվել ու մեզ են հասել անցյալի արժեքներն ու ինքնատիպ գոհարները, որոնցով այսօր դաստիարակվում ու կրթվում է 21-րդ դարի հայ էթնոկիիրը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Երկեր 4 հատորով, Բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ և գրույցներ, հ. 1, Երևան, Պետհրատ, 1947:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, 2015, էջ 173:
3. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1994, էջ 472:
4. Հակոբյան Գ., Էթնոմանկավարժություն, ուսումնական ուղեցույց, Երևան, «Արտագերս», 2015, էջ 57:
5. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 253:
6. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, 530 էջ:
7. Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Հայկ. ՍՍՀ, ԳԱ հրատ., Երևան, 1936, էջ 215:
8. Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Առակներ, Հայպետհրատ, Երևան, 1951:
9. Батурина Г.И., Кузина Т.Ф., Народная педагогика в воспитании дошкольников, М., 1995, с.41-45
10. Волков Г.Н., Этнопедагогика, Уч. Пособие для студентов, М.: Изд. Центр «Академия», 1999, 186 с.
11. Горький М., Материалы и исследование, АН СССР, 1934, т. 1, с. 124.
12. Мартынова М.Ю., Мир традиций и межкультурное общение, М., 2004.
13. Хухлаев О.Е., Волшебные капельки счастья. Терапевтические сказки, Изд. «Проспект», 2021, с. 374.
14. Хухлаева О.В., Этнопедагогика: социализация детей и подростков в традиционной культуре, Уч. пособ., МПСИ, М., 2008.

Получено: 03. 04. 2023

Рассмотрено: 06. 04. 2023

Принято: 27. 04. 2023

Received: 03. 04. 2023

Reviewed: 06. 04. 2023

Accepted: 27. 04. 2023

Journal "Education in the 21st Century", Vol1-9/1/, 2023



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License